

# ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ՄԵՐԺԵՑ ՃՆՇՈՒՄԻ ՏԱԿ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՑԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԸ

## ՑՈՅՑԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ ԱՐԳԻԼՈՒԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԵՅՔ ՄԷՋ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԸՆԿ. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

ԹԱՍՍ լրատու գործակալութեան կողմէ հաղորդուած տեղեկութեան մը համաձայն, Խորհրդային Միութեան Գերագոյն Սովետի նախագահութիւնը (խորհրդարան), գումարուած՝ դիւտարութեամբ նախագահ Անտրէ Կրոմիքոյի եւ ի ներկայութեան՝ Խ. Միութեան թիւ 1 շեկալար Միխայիլ Կորվաչովին, մերժեց Ղարաբաղի Մարզին Հայաստանի կցման պահանջը, զայն նկատելով «անհանդուրժելի»:

Գերագոյն Սովետի նախագահութիւնը անընդունելի նկատեց պետութեան զանազան մարմիններուն վրայ ճնշում բանեցնելով սահմանային փոփոխութիւն կատարելու մեթոտը, սահմաններ՝ որոնք որոշուած են սովետական սահմանադրութեամբ:

Գերագոյն Սովետի նախագահութիւնը բաղկացած է մօտ քառասուն անդամներէ: Ակնարկելով սահմանադրութեան թիւ 81 յօդուածին, նախագահութիւնը կը յայտնէ, թէ «դաշնակցային հանրապետութիւններու իրաւունքները պաշտպանուած են Սովետական Ընկերավարական Հանրապետութիւններու Միութեանէն»:

Որոշումը՝ ստորագրուած Անտրէ Կրոմիքոյի կողմէ, բաղկացած է 5 կէտերէ, որոնք են.

1.- Գերագոյն Սովետի նախագահութիւնը անհանդուրժելի կը զտնէ որ ազգային ու հողային բարդ հարցեր փորձուին լուծուիլ պետութեան վրայ ճնշում բանեցնելով՝ կիրքով եւ գրգռուած վիճակով, կազմելով կամայական կոմիտէներ: Այս կէտը, կ'ըսեն ղիտորդներ կը վերաբերի «Ղարաբաղի կոմիտէին» որ Ղարաբաղի Մարզին Հայաստանին կցումը կը պահանջէ:

Գերագոյն Սովետի նախագահութիւնը կը կարծէ թէ կացութեան ձգտուած վիճակին շարունակութեան ու Հայաստանի ու Ատրպէյճանի սահմաններուն վերատեսութիւնը կրնան աննախատեսելի հետեւանքներ ունենալ:

Ան «վճռապէս կը դատաւարտէ անհատներու եւ խումբակներու կողմէ գործուած ոճրային արարքները, որոնք մարդկային զոհեր խլեցին»: Ըստ պաշտօնական հաշուեկէզի, միջհամայնքային բախումները պատճառեին 32 մեռեալ եւ 197 վիրաւոր Սովետացիներ մէջ, իսկ 2 մեռեալ եւ յիսուսի մօտ վիրաւորներ՝ Ղարաբաղի մէջ:

2.- Հայաստանի եւ Ատրպէյճանի սովետներուն պարտականութիւնն է խորապէս քննել ատելութեան առաջնորդող պատճառները եւ զանոնք ջնջել: Անոնք պէտք է հակառակին ազգայնական եւ ծայրայեղական ամէն տեսակի ցուցական երեւոյթներուն եւ պէտք է աշխատանքի համար հանդարտ մթնոլորտ մը ստեղծեն, արմատապէս բարելաւելով քաղաքական ուսուցումը ժողովուրդներու մէջ, բարեկամութեան եւ եղբայրութեան ոգիով առաջնորդուած:

3.- Հայաստանի եւ Ատրպէյճանի Գերագոյն Սովետի նախագահութիւնները միասնաբար պէտք է միջոցներ ձեռք առնեն քննականոն կեանքը հաստատելու համար երկու երկիրներու մէջ:

4.- Խորհրդային Միութեան Նախարարաց Խորհուրդը պէտք է միջոցներ ձեռք առնէ լուծելու համար Ղարաբաղի Մարզի տնտեսական, ընկերային եւ մշակութային մարզերու զարգացումին եւ յառաջդիմութեան հարցերը:

5.- Խ. Միութեան ընդհ. դատախազութիւնն ու ներքին նախարարութիւնը պէտք է ամէն միջոց ձեռք առնեն Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ կարգ ու կանոնի վերահաստատման եւ պաշտպանելու երկու ժողովուրդներու օրինաւոր շահերը երկու երկիրներու տարածքին վրայ:

### ՇԱՐԱԹ ՕՐ ԵՐԵՒԱՆ «ՄԵՌԵԱԼ ՔԱՂԱՔ»

Լիրանանեան պետական ձայնասփիւռը, իր Փրանսական ձայնասփուռումին ընթացքին հաղորդեց թէ Գերագոյն Սովետի նախագահութեան որոշումը, որ «անհանդուրժելի» կը նկատէր Ղարաբաղի կցման պահանջը, դժգոհութեան ալիք մը բարձրացուցած է Երեւանի մէջ: «Ղարաբաղի կոմիտէն» կուշով մը հրաւիրած է ժողովուրդը տունը մնալու՝ մայրաքաղաքը վերածելով «մեռեալ քաղաքի», այսպէսով բողոքելով Մոսկուայի որոշումին դէմ:

Առանց իր ազդիւրը յիշելու, Պէյրութի ձայնասփիւռը յայտնեց, թէ Երեւանի փողոցներուն մէջ երեւցած են մեծ թիւով միլիաններ (ուստիկաններ), որոնց հետ «Ղարաբաղի կոմիտէն» չ'ուզեր հարց ունենալ ցոյցեր կազմակերպելով, այլ բարարուած է այս միջոցառումով, բայց մինչեւ որ հայերու պահանջը իրագործուի ան որոշած է հարցին հետապնդումը շարունակել: